

րերար սրբոյ Աթոռոյս եւ Ազգիս մերոյ նման սորին»¹ :

Հայ կեանքի ճգնաժամային օրերու ծնունդն էր Մովսէս, քառսի մէջ ծագած լոյս մը՝ փրկութեան յոյս ներշնչելու նաւարկ-կեանքներուն, առաջնորդ ըլլալու նաւակոծեալներուն եւ վերածնութեան խթան՝ խաւարի մէջ թարթափողներուն :

Օսմանեան տիրապետութեան տակ հարստահարուած, պարսկական բռնապետութենէն տեղահանուած եւ չորս հովերու ցրիւ եկած ժողովրդեան միութեան նեցուկ մ'եղաւ անիկա, ամայութեան մէջ նոր կեանք վերընծուող հայր մը, աւերակներու վրայ նոր քաղաքակրթութիւն կառուցանող ճարտարապետ մը, եղծուած բարքերու բուժիչ մը եւ հանգած խորաններու վրայ նոր զոհ վերընծայող քահանայապետ մը. ինչպէս հին Իսրայէլի առաջնորդը անապատներէն, այնպէս համանուն կաթողիկոսն Հայոց Մովսէս Գ. Հանեց իւր ժողովուրդը աւերակներու կոյտերէն Աւեսեաց երկիրը :

Ինչպէս Բեռնարդոս մը յԱրեւմուտս, այնպէս Մովսէս յԱրեւելս ելաւ հրապարակ հնչեցնելու աւետարանական քարոզութիւնը քաղաքներու եւ գիւղերու մէջ, խարազանելու անկեալ բարքերը. եւ ինչպէս Գրիգոր Է. Լատերանու բարձունքէն, այնպէս Մովսէս Գ.

¹ Սիմէոն կաթողիկոս Երեւանցի, Զամբո գիրք. Վաղարշապատ 1873, էջ 21: